

ՄԱՐԻԱ ՍԻՔՍ-ՀՈՀԵՆԲԱԼՔԵՆ

**ԵԶՊԻՆԵՐԻ 72-ՐԴ ՖԻՐՄԱՆԸ.
«ՔՈՂԱՐԿՎԱԾ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ»՝
ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԱՈԱԶԻՆ ԱՇԽԱՐՀԱՍԱՐՏԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

Սկիզբը՝ թիվ Դ., Ե.

ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԻ ՀԵՏՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ¹

Երբ 1915 թ. Օսմանյան կայսրության արեւելյան նահանգներում սկսվեցին ցեղասպանական հալածանքները, եզդիները քրիստոնյաների նկատմամբ կիրառվող ոչնչացման միեւնույն ռազմավարությունների զոհը դարձան։ Ցեղասպանություն վերապրած հայերի վկայություններում առկա են հիշատակություններ, որոնց համաձայն եզդիներն արժանացել են հայերի ճակատագրին², եւ նրանք միասին են փորձել ապաստան գտնել³։

Ստորեւ ներկայացված ակնարկները գլխավորապես հիմնված են ընտանեկան պատմությունների ժամանակակից պատումների վրա. դրանք միջնորդավորված⁴ կամ հետհիշողություններ⁵ են, որոնք խարսխված են

¹ Սույն եզրույթի առնչությամբ տե՛ս նույն տեղում, էջ 75–76, 29-րդ ծնթ. (ծնթ.՝ թրգմ.)։

² Sém V. SVAZLIAN, The Armenian Genocide: Testimonies of the Eye-Witness Survivors, Yerevan: Gitutyun Publishing House, 2011, էջ 93 (Ռեհան Մանուկի Մանուկյանի վկայությունը), կամ՝ էջ 176 շրնկ. (Էվելինա Հակոբի Կանայանի վկայությունը)։ Հարկ ենք համարում նշել, որ հոգվածի հեղինակը, որպես հղված աշխատության տպագրության տարեթիվ, նշել է 2005 թվականը, սակայն մեր որոնումների ընթացքում չկարողացանք գտնել այն, հետեւաբար որոշեցինք կիրառել երկրորդ՝ 2011 թ. անգլերեն հրատարակությունը (ծնթ.՝ թրգմ.)։

³ Նույն տեղում, էջ 190։ Տե՛ս Խանումա Ջնդի Ջալիլի վկայությունը։ Խանուման ծնվել է 1912 թ. Կարսում՝ Ղրզըղուլա (Կրզըղուլե) գյուղում, որ հայտնի է նաեւ «Կզըղկալա», «Կզըղկուլա» եւ «Կզըղկալե» անուններով (տե՛ս Թ. Խ. ՀԱԿՈՔՅԱՆ, ՍՏ. Տ. ՄԵԼԻՔ-ԲԱՆԵՅԱՆ, Հ. Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 3-րդ, Երեւան, 1991, էջ 112, հմտ. էջ 113, ծնթ.՝ թրգմ.)։ Ապաստան գտնելուց հետո որբացել է։ 1918 թ. հայերն ու եզդիները միասին են արտագաղթել։

⁴ Sém D. BERLINER, Social Thought and Commentary: The Abuses of Memory: Reflections on the Memory Boom in Anthropology, “Anthropological Quarterly”, vol. 78, № 1, 2005, էջ 197–211։ Ի հավելումն նշենք նաեւ, որ սույն հատվածում հեղինակն օգտագործել է անգլերեն «vicarious memory» արտահայտությունը, որը բառացի նշանակում է «փոխարինող հիշողություն» կամ «փոխարինված հիշողություն», սակայն հաշվի առնելով հայերենի լեզվամտածողական առանձնահատկությունները՝ այս բառակապակցությունը թարգմանել ենք «միջնորդավորված հիշողություն» իմաստով (ծնթ.՝ թրգմ.)։

⁵ Sém M. HIRSCH, The Generation of Postmemory: Writing and Visual Culture after the Holocaust, New York: Columbia UP, 2012։

ոչ թե գրուցակիցների անձնական փորձառությունների, այլ իրենց նախնիների ավանդած հիշողությունների վրա: Մի քանի տեղեկագրություններ հաստատում են այդ հետհիշողությունները: Թեեւ այս վերապատումները չեն կարող [լիարժեք] փոխարինել ականատեսների վկայություններին կամ ցուցմունքներին, այդուհանդերձ դրանք թույլ են տալիս հանգամանորեն ուսումնասիրել [ցեղասպանական] ռազմավարություններն ու հալածանքների միջոցները:

Սույն ուսումնասիրությունն իրականացնելու համար 2015 եւ 2016 թվականներին դաշտային հետազոտություններ⁶ են իրականացվել Հայաստանի Հանրապետության եզդիաբնակ գյուղերում: Պատումային հարցազրույցները կազմակերպվել են [եզդի] ժողովրդի մայրենի լեզվով: Այսօր Հայաստանում եզդիները հաճախ են ընդգծում էզդիկի [կամ «եզդիկի»]⁷ քրդերենի քուրմանջի բարբառի⁸ սոցիոլեկտի⁹ առանձնահատ-

⁶ Վերոնյալ եզրույթի առնչությամբ տե՛ս «էջմիածին», 2023, Դ., էջ 75, 28-րդ ծնթ. (ծնթ.՝ քրզմ.):

⁷ «էզդիկի» [կամ «եզդիկի»] եզրույթը կիրառվում է հայաստանաբնակ եզդիների շրջանակում օգտագործվող քուրմանջի բարբառի առանձնահատկությունները նկարագրելու համար: Այն բովանդակում է երկիմաստություն եւ արտացոլում է մահմեդական քրդերի հետ ունեցած լարված հարաբերությունները: Ի. դարում, մինչ քրդերենը մի քանի տասնամյակ արգելված էր Թուրքիայում, խորհրդային Միության տարածքում լեզուների [պետական] օժանդակությունը նպաստեց վերջինիս զարգացմանը: Հայ-քրդական ռազիոհեռարձակումները կարող էին հասանելի լինել Թուրքիայում: Այսօր Հայաստանի առաջագեծ եզդիական խմբերը շեշտադրում են իրենց լեզվի առանձնահատկությունները. դրանք, իսկապես, տարբերվում են խոսակցական լեզվով, առողջանության մեծ ու արտահայտություններով, որոնք արտացոլում են նաեւ եզդիական կարգերն ու օրենքները: «էզդիկի» հասկացությունը երբեմն համարվում է Հայաստանի կառավարության արտադրանք՝ քրդական ինքնությունից անջատ եզդիական ինքնությունը սատարելու համար: Հատկապես 2014 թ. ցեղասպանական գործընթացներից սկսած՝ հայաստանաբնակ եզդիների՝ իրենց ոչ քրդական պատկանելությունն արտահայտելու ուղղությամբ գործադրած ջանքերը ոչ թե պարտադրված, այլ գիտակցաբար ընտրված ինչ-որ իրողություններ էին:

⁸ Պատկանում է հնդեվրոպական ընտանիքի իրանական լեզվախմբին (ծնթ.՝ քրզմ.):

⁹ «Սոցիոլեկտ» (անգլ.՝ «sociolect») եզրույթը նշանակում է «հասարակական բարբառ». այն լեզվական առանձնահատկությունների մաքուրություն է, որը բնորոշ է որոշակի հասարակական խմբի (մասնագիտական, տարիքային, դասային եւ այլ) խոսքին՝ լեզվի գոյության որոշակի ձևի մեջ: Որպես եզրույթի հոմանիշ հաճախ կիրառվում են «ժարգոն» (հասարակության որեւէ խմբի անդամների խոսվածքը, որը պարունակում է մեծ թվով յուրահատկություններ. չունի իր սեփական քերականական կառուցվածքը եւ բառապաշարը. հիմնվում է ընդհանուր գրական լեզվի վրա (տե՛ս Ա. Հայրապետյան, Օտար բառերի բառարան, Երեւան, 2011, էջ 213) եւ «սլենգ» (խոսակցական լեզվի արտահայտչական եւ հուզական երանգավորում ունեցող բառ, որ շեղվում է ընդունված գրական լեզվի չափանիշներից: Այն ավելի հաճախ օգտագործվում է անգլիախոս միջավայրում անգլերենի գործառության առնչությամբ (նույն տեղում, էջ 514) բառերը (եզրույթի առնչությամբ առավել մանրամասն տե՛ս P. TRUDGILL, A Glossary of Sociolinguistics, Oxford-New York: Oxford University Press, 2003,

կուլթյունները: Փաստագրված էին [ցեղասպանության] զոհերի ժառանգների երկրորդ եւ երրորդ սերունդների վերապատումները, մասնավորապես՝ ընտանեկան եւ տոհմային համայնքի պատմությունները: Նյութի մշակման մեթոդաբանական մոտեցումը ներառում էր տեղեկությունների որակական վերլուծություն, ինչպես նաեւ տվյալների եռանկյունավորում¹⁰: Պատմական իրադարձություններին անդրադառնալիս զրուցակիցները ճշգրտությամբ էին մատնանշում իրենց ընտանեկան պատմությունների փոխանցման շղթան եւ ամենայն մանրամասնությամբ ներկայացնում իրենց նախնիների վկայությունները՝ ընդհուպ մինչեւ այդ վերապատումների ընթացքում նրանց ձեռքի իմաստային շարժումներների (լատ. *gestus*) վերարտադրությունը: Փոխանցված գիտելիքներն անձնավորել են հարցմանը մասնակցած անհատները, որոնք խիստ տարբերակումներ են ներմուծել ականատեսների առանձնահատուկ վկայությունների միջեւ՝ իրենց նախնիների վերապրած ոչնչացման տեսակի ու վայրի առնչությամբ տարանջատելով եւ վերապատմելով դրանք: Զրուցակիցներից ոմանք նույնիսկ հիշում էին այն գյուղերի անունները, որտեղից եկել էին իրենց նախնիները, եւ հիշատակում այն ծանծաղ գետերը, որոնցով նրանք կարողացել են անցնել Հայաստանի սահմանը: Յոթանասուն տարեկան մի մարդ պատմեց իր հոր փոխանցած պատմությունը. «Նրանք եկան ու շրջապատեցին մեր գյուղը: Դա մահմեդական Ուսիվե Ֆելեքեի հրոսակախումբն էր. նրա անունը Ուսիվե էր, բայց ժողովուրդն անվանում էր Ուսիվե Ֆելեքե: [Նրանք] շրջափակեցին մեր գյուղը, պաշարեցին մեր գյուղը չորս կողմից, հավաքեցին ողջ [ժողովրդին] եւ բերեցին մի մեծ կառույցի մեջ... նրանք [թշնամիները] ի մի հավաքեցին մեզ... բոլորիս՝ թե՛ տղամարդկանց եւ թե՛ կանանց: Նրանք ստիպեցին մեզ հանել մեր հագուստները, մենք մերկ էինք, եւ միայն կանանց վրա թողեցին ներքնագգեստները: Նրանք վերցրին մեր զգեստները... հափշ-

ինչպես նաեւ՝ M. DURRELL, *Sociolect*, in: “Sociolinguistics: An International Handbook of the Science of Language and Society”, vol. 1, ed. by U. Ammon, N. Dittmar, K. J. Mattheier & P. Trudgill, New York-Berlin: Walter de Gruyter, 2004, էջ 200–205, ծնթ.՝ թրգմ.):

¹⁰ Եռանկյունավորում՝ որակական նյութի եւ արխիվային սկզբնաղբյուրների ու բանավոր պատմության սահմաններում: Հարկ է նշել, որ «Եռանկյունավորում» եզրույթը կիրառվում է գիտության զանազան երկրաբաշխության (գեոդեզիա), ճարտարապետության, ռադիոտեղորոշման ու ռադիոկապի, ռազմական արվեստի, մաթեմատիկայի, հասարակական գիտությունների եւ այլ բնագավառներում: Սույն հատվածում այն օգտագործվել է հետեւյալ նշանակությամբ՝ արդյունքների ինքնուրույն հաստատման նպատակով առնվազն երեք մեթոդներով իրականացված միեւնույն ցուցիչի չափում (ծնթ.՝ թրգմ.):

տակեցին մեր ունեցվածքը: Մուլթն ընկնելուն պես մեզ ազատ արձակեցին եւ ասացին, «Հեռացե՛ք [այստեղից]»: Նրանց մի մասը սպանվեց, մյուսը մասը վիրավորվեց, իսկ ոմանք էլ փրկվեցին...: Մենք այստեղ հասանք երեք օրվա ընթացքում. ցերեկվա ժամերին թաքնվում էինք եւ քայլում միայն գիշերը»¹¹:

Ստուրկի տոհմից յոթանասունչորսամյա մի տղամարդ պատմում էր պատմություններն իր նախնիների, որոնք գաղթել էին Արաքս գետի սահմանամերձ մի գյուղակից, որն այսօր էլ կարելի է տեսնել զրուցակցի գյուղից:

«Բազում մարդիկ սպանվեցին: Սպանվեցին նաեւ պապիս բոլոր եղբայրները: Պապս մազապուրծ փրկվեց հորս ու հորաքրոջս հետ միասին: Նա վերցրեց այս երկու երեխաներին եւ մեծ դժվարությամբ կարողացավ փրկել նրանց...: Կես ճանապարհին նրանք [թշնամիները] հարձակվեցին [նրանց] վրա եւ խլեցին վերջիններիս ունեցվածքն ու անասունների հոտը եւ կողոպտեցին նրանց»¹²:

Բազմաթիվ պատմությունների առանցքը նաեւ մեծ ընտանիքների կամ տոհմերի ճակատագիրն էր, որը հստակեցնում էր այն իրողությունը, համաձայն որի՝ հարձակումները ծրագրավորված բնույթ են կրել եւ նպատակաուղղված են եղել գյուղերի ու տոհմային համայնքների լիակատար ոչնչացմանը: Յայսօր համայնքի ներսում դեռեւս պահպանվել է տարբեր ցեղերի անդամակցությունը: Եզդիական հասարակության մեջ անհատների կարգավիճակը գնահատվում է ծագումնաբանական պատկանելության հետ համակցված հասարակական-կրոնական տոհմային համակարգով: Ինչպես հավաստիորեն ցույց է տվել Խ. Օմարխալին, սեփական տոհմի ու ծագումնաբանության պատմության մասին գիտելիքները կարելուր են եւ սահմանում են հասարակական հարաբերությունները¹³: Այսպիսով՝ թեեւ հարցման մասնակիցներն իսկապես անդրադառնում էին իրենց անմիջական նախնիների ճակատագրին, այնուամենայնիվ, շատերի պատմություններն առավել լայն շրջանակ էին ընդգրկում եւ ներկայացնում էին նաեւ տոհմային համայնքի կամ դրա շառավիղների ճակատագիրը:

¹¹ Հարցազրույց, 2016 թ. մայիսի 31: Բոլոր հարցազրույցները ներկայացված են անանունության ընդհանուր համաձայնությամբ:

¹² Հարցազրույց, 2015 թ. հոկտեմբերի 15:

¹³ SĒu KH. OMARKHALI, On the Structure of the Yezidi Clan and Tribal System and its Terminology among the Yezidis of the Caucasus, "Journal of Kurdish Studies", vol. 6, 2008, էջ 104–119:

Յոթանասուն տարեկան մի տղամարդ պատկանել է Զուբուրի տոհմին¹⁴։ Նա եկել է Վանի շրջակայքից, որտեղից նրանք գաղթել են Իգդիրը։ Ճանապարհորդությունը տեւել է մոտ երկու շաբաթ։ Իգդիրում նրանք բնակվել են մեկ տարի, սակայն 1915 թվականին աքսորվել են ու ապաստան գտնելու նպատակով ստիպված են եղել անցնել Արաքս գետի սահմանը։ Հետո նրանք որոշել են վերադառնալ Օսմանյան կայսրություն, քանի որ այնտեղ էին թողել իրենց ողջ ունեցվածքն ու այլ իրեր։ Նրանք հույս ունեին, որ պատերազմական գործողությունների ավարտից հետո ամեն բան կկարգավորվի, եւ իրենք կկարողանան վերադառնալ իրենց ծննդավայրը։ Բայց նրանք կրկին հալածանքների ենթարկվեցին 1918 թվականին, եւ նույնիսկ սպանվեց մի քանի մարդ։ Չնայած որ առկա էր կռվելու եւ ինքնապաշտպանության դիմելու ծրագիր, այնուամենայնիվ Օսմանյան կայսրության զինված ուժերը քանակապես գերազանցում էին նրանց։ Ինչպես հարցվածներից ոմանք, նա եւս առանձնապես թվարկել եւ որոշ դեպքերում նշել է ընտանիքի սպանված անդամների անունները։ [Սույն մարդը վկայում էր հետեւյալը]։ «Մեր ընտանիքից սպանվեց պապս։ Նրան ոչ միայն սպանեցին, այլեւ ոչնչացնելուց հետո թողեցին այնտեղ, բոլորը փախուստի դիմեցին։ Մահապատժի ենթարկվեց նաեւ հորեղբայրներիցս մեկը, սակայն [թշնամիների] կազմակերպած մեծածիժ սպանդին զոհ գնացին նաեւ մեր համագյուղացիները, հորեղբայրներիս ու մորեղբայրներիս զավակները, նրանց [տոհմի] շատ անդամներ սպանվեցին»։

Մենք զրուցեցինք իննսուներկուամյա մի ծերունու հետ¹⁵։ Վերջինիս հայրը պատմել է նրան, որ իր տոհմից սպանվել է մոտավորապես երկու հարյուր մարդ, որոնցից հարյուրը երեխաներ էին։ Նա ընդգծեց նաեւ այն հանգամանքը, որ թշնամիները չեն խնայել նույնիսկ ծեր կանանց։ Նրիտասարդ կանայք առեւանգվել են, ենթարկվել սեռական բռնության եւ հետո զոհ դարձել սպանդին։

Յոթանասունին մոտ մեկ այլ կին, որը [եգդիական] հոգեւոր խմբավորման անդամ էր, բացատրեց, որ տարածաշրջանում անկարգությունների սկսվելու պահին իր պապերն ու տատերը բնակվել են Կարսին մերձակա մի փոքրիկ գյուղում։ Նրա պապը գնդացիներ է

¹⁴ Հարցազրույց, 2016 թ. հունիսի 1:

¹⁵ Հարցազրույց, 2016 թ. հունիսի 2:

ձեռք բերել եւ երկու ավագ որդիների հետ գնացել շրջակայքի անտառները՝ գյուղը պաշտպանելու, եւ պատվիրել կնոջն ու երեք որդիներին ապաստանել հարեւան Հայաստանում: Տատիկին հաջողվել էր փախչել երեք փոքր երեխաների հետ, սակայն երեխաներից մեկը մահացել է փախուստի ճանապարհին: Հետագայում նա իմանում է, որ ամուսինն ու երկու որդիները փրկվել են: Միեւնույն ժամանակ նրա պապին տեղեկացրել են, որ իր կնոջը հաջողվել է փախուստի դիմել եւ ապահով տեղ հասնել: Բայց սահմանը լիովին փակ էր, եւ նրա պապն ու տատը այդպես էլ չկարողացան հանդիպել իրենց կյանքի ընթացքում: Հայաստանում բնակություն հաստատած ընտանիքին մի քանի տարի առաջ գտան Թուրքիայում մնացած նրանց երկու որդիների ժառանգները, որոնք հետո այցելեցին հայաստանաբնակ իրենց հարազատներին: Այսպիսով՝ ընտանիքի հաջորդ սերնդի անդամները վերամիավորվեցին:

Հարցման մասնակիցներից շատերը հաստատեցին այն իրողությունը, որ իրենց նախնիները եկել են Կարսի ու Իզմիրի շրջաններից: Մի քանիսը գաղթել էին Վանից, իսկ երկուսի ընտանիքները՝ ավելի հեռու գտնվող Մոսուլի շրջանից: Կարսի նահանգը խիստ վիճարկելի տարածք է եղել, այդ իսկ պատճառով տարբեր ժամանակներում այն նվաճվել, զավթվել ու ընդգրկվել է ինչպես Օսմանյան, այնպես էլ Ռուսական կայսրությունների կազմում¹⁶: Ռուսական տիրապետության ժամանակահատվածում նշյալ գավառում տեղի է ունեցել մահմեդական ընտանիքների զանգվածային արտագաղթ, ինչպես նաեւ ներգաղթել ու այստեղ են ապաստանել [այլ ժողովուրդների ներկայացուցիչներ]: 1878 թվականին նահանգի ամենամեծ ծագումնաբանական խումբը հայերն էին: Համաձայն Ա. Մելքոնյանի բնորոշման՝ «այն բանից հետո, երբ տվյալ տարածաշրջանը Ռուսական կայսրության մաս դարձավ եւ ականատես եղավ ռուսների, հայերի, հույների, պարսիկների, եզդիների, գերմանացիների, էստոնացիների եւ այլոց՝ ընդհանուր առմամբ մոտ քսան ծագումնաբանական խմբերի ներհոսքին, հայերը դեռեւս մեծամասնություն էին կազմում, քանի որ հայ նոր գաղթականները շարունակում էին Օսմանյան կայսրությունից հատել սահմանը»¹⁷:

¹⁶ Տե՛ս A. MELKONYAN, The Kars Oblast, 1878–1918, in: “Armenian Kars and Ani”, ed. by R. G. Hovannisian, Costa Mesa: Mazda Publishers, 2011, էջ 223–244, հատկապես՝ էջ 228:

¹⁷ Նույն տեղում:

Ութսունամյա մեկ այլ անձնավորություն¹⁸ վերհիշեց իր համագյուղացիների պատմած պատմությունները իրենց ողջ մնալու մասին: Մեկ ուրիշ տղամարդ, որը ընդամենը երեխա էր ցեղասպանական հալածանքների ժամանակ, փրկվել է իր տատիկի պաշտպանության շնորհիվ, եւ նրանց հաջողվել է ապաստան գտնել Հայաստանում: Նրանք փափագում էին գտնել իրարանցման ընթացքում կորցրած հարազատներին եւ վերջապես որոշեցին վերադառնալ Օսմանյան կայսրությունում գտնվող իրենց տունը: Այստեղ նրանք տեղեկանում են, որ [բարեկամներից] որեւիցե մեկը չի փրկվել, եւ որ նոր բնակիչները՝ թուրքերը, ինչպես նաեւ քրդերը գրավել ու յուրացրել են ողջ գյուղը՝ ներառյալ բոլոր տներն ու այլ սեփականությունները: Նրանք հասկանում են, որ վերստին կանգնել են մահվան սպառնալիքի առջեւ եւ, փախուստի դիմելով, կրկին վերադառնում են Հայաստան: Հայաստանի ու Վրաստանի տարբեր վայրերում շրջելուց եւ բարեկամներին որոնելու փորձերից հետո նրանք, ի վերջո, համոզվեցին, որ ընտանիքից միակ փրկվածները հենց իրենք են:

Իրոք, մի քանի փրկվածների ժառանգներ պատմեցին, թե ինչպես են տարիներ անց նրանք իմացել ընտանիքի անդամներին բաժին հասած ճակատագրերի մասին՝ արդյո՞ք նրանք կարողացել են ապաստանել Հայաստանում, թե՞ ողջ են մնացել Թուրքիայում: Փրկվածներից շատերն իրենց կյանքի մնացած մասն անցկացրել են՝ չիմանալով իրենց ազգակիցների գտնվելու վայրի ու ճակատագրի մասին:

Հիսուննին մոտ մեկ ուրիշ տղամարդ հիշում է իր պապի ողջ մնալու պատմությունը¹⁹: Պապն ութ տարեկան էր, երբ փախչելով փրկվել է իր հորաքրոջ հետ միասին: Չնայած նա, իր երկվորյակից զատ, ունեցել է նաեւ տասնմեկ քույր ու եղբայր, սակայն նրա պապը միակ փրկված երեխան էր: Նրանց գյուղում բնակվել է տոհմային նույն համայնքին պատկանող մոտ հիսուն ընտանիք: Բոլոր հարազատներից միայն նրա պապիկին է հաջողվել փախչել հորաքրոջ հետ: Սույն մարդու պապն ականատես է եղել, թե ինչպես են հուսահատության գրկում հայտնված գաղթականները ինքնասպանություն գործել՝ իրենց եւ սեփական երեխաներին Արաքս գետը նետելով:

Սահմանագոտում գտնվող գետի հատման վերաբերյալ հիշատակությունը բազմաթիվ վերապատումներում վճռորոշ մի պահ է, քանի որ

¹⁸ Հարցազրույց, 2015 թ. հոկտեմբերի 28:

¹⁹ Հարցազրույց, 2015 թ. հոկտեմբերի 15:

շատ մարդիկ գետն անցնելու փորձերի ընթացքում խեղդամահ են եղել: Զրուցակիցները վերհիշում են, թե ինչպես են փրկվածներից ոմանք վկայել ոչ միայն սպանությունների՝ ներառյալ իրենց աչքի առաջ ընտանիքի անդամների ցեղասպանվելու ժամանակի ու տեղի մասին, որոնց ականատեսներն են եղել իրենց տանը, այլև պատմել իրենց ողբերգական փախուստի, հատկապես՝ սահմանային գետն անցնելու վերաբերյալ մանրամասներ: Գետի հոսանքը քշել-տարել է մարդկանց, եւ ըստ որոշ ականատեսների՝ ջրի մեջ լողացող դիակներ են եղել: Փրկված մարդիկ ստիպված էին թողնել իրենց մահացած հարազատներին՝ առանց պատշաճ հուղարկավորության, եւ դժվարությունները հաղթահարել մյուս գաղթականների հետ, որոնք մահանում էին ուժասպառության, հիվանդության կամ սովի պատճառով:

3. Լեփսիուսն ու հայ ականատեսը ցնցվել էին Արաքս գետում տիրող սարսափելի իրավիճակից: Փախստականները տարբեր կրոնական ու ցեղային ծագում ունեին: Եզդիներից ոմանք ապաստան էին փնտրել իրենց հայ հարեւանների հետ միասին, մինչդեռ մյուսները փախուստի էին դիմել եզդի համագյուղացիների հետ: Հայ Ազգային Կոմիտեի նախագահ Սամսոն Հարությունյանը, որ անձամբ էր գնացել գաղթականներին դիմավորելու, 1915 թ. օգոստոսի 13-ին էջմիածնից մի ճեպագիր է ուղարկել Թիֆլիսում հրատարակվող «Հորիզոն» թերթին. «Թուրքական սահմանի եւ Իզդիրի (ռուսական առաջին գյուղի) միջեւ առկա գյուղական ողջ բնակավայրը լեփ-լեցուն է փախստականներով...: Իզդիրում՝ ժամանման առաջին կայանատեղիում կուտակվել է 20 000-անոց հոծ բազմություն, իսկ 45 000-անոց մեկ այլ խառնամբոխ՝ էջմիածնում. այս երկու կենտրոններից նրանց խումբ-խումբ տեղաբաշխում են այլ շրջաններում...: Վանից եւ շրջակա գյուղերից դուրս եկած գաղթականները ոտքով կտրելանցել են ամբողջ տարածությունը: Նրանց մեծամասնությունը հիվանդ ու սովամահ վիճակում է, քանի որ հեռանալու պահին չեն կարողացել իրենց հետ որեւէ բան վերցնել: Իրենց ճանապարհորդության ընթացքում նրանք չեն ենթարկվել հարձակման՝ բացառությամբ Բերգերի-Կալայի»²⁰, որտեղ քուրդ հրոսակախումբը հարվածներ հասցրեց լմարդկա-

²⁰ Բերգերի-Կալա» քաղաքը կամ գյուղաքաղաքը հայտնի է նաեւ «Բերգրիգալա», «Բերգրիկալա» անուններով. հայերեն համարժեքը «Բերկրի» տեղանունն է: Գտնվում է Արեւմտյան Հայաստանում՝ Վանի նահանգում: Սույն գյուղաքաղաքի անվան բոլոր տարբերակներով կոչվել է նաեւ ողջ գավառը, որը համապատասխանում է Մեծ Հայքի Վասպու-

յին] անպաշտպան շարասյանը եւ 20 000 մարդու փոխադրեց թիկունք, որոնց ճակատագրի մասին մենք անտեղյակ ենք»²¹:

Հարցման մասնակիցներից շատերը վերհիշեցին իրենց նախնիներին՝ ողջ կյանքի ընթացքում վերապրած տառապանքն ու ցավը, քանի որ նրանք զանգվածային սպանությունների եւ տղամարդկանց, կանանց ու երեխաների վրա դաժան հարձակումների ականատեսն էին եղել:

Բազմաթիվ եզդիների համար այն ժամանակ ապրուստի միջոցն անասնապահությունն էր: Չնայած փրկվածներին հաջողվել էր ապաստան գտնել, այդուհանդերձ նրանք չէին կարողացել իրենց հետ վերցնել սեփական անասնափախերը (կամ որեւէ այլ գույք), որոնք վերջիններիս գոյություն միջոցներն էին: Ոճրագործները կողոպուտի էին ենթարկել եզդիաբնակ գյուղերը: Համաձայն որոշ զրուցակիցների պատումների՝ իրենց վերապրած ու ականատես եղած դժվարին արտագաղթի, հալածանքների, ինչպես նաեւ հետագա տարիների ծանր կենսապայմանների պատճառով փրկվածները մահանում էին մի քանի ամսվա ընթացքում, հաճախ՝ տակավին երիտասարդ տարիքում: Առաջին տարիներին նրանք բախվեցին սարսափելի դժվարությունների եւ աղքատության, ինչպես նաեւ իրենց հարազատների ճակատագրի վերաբերյալ ցավալի անիրագեկության: Ընդհանուր առմամբ, հետպատերազմյան վիճակի պատճառով ծանր էին կենսապայմանները, քանի որ փրկվածները տառապում էին սովից ու հիվանդություններից: Համաձայն արխիվային սկզբնաղբյուրների՝ Առաջին աշխարհամարտից հետո Հայաստանի նորաստեղծ Հանրապետությունում ապաստան էր գտել մոտ 500 000 գաղթական, իսկ Կովկասյան ողջ տարածաշրջանում հաստատվել էր քսան տարբեր ազգությունների պատկանող մոտ 850 000 փախստական²²: Որոշ մարդիկ նշեցին նաեւ, որ իրենց նախնիներն ստիպված են եղել տարիներ շարունակ ապրել քարանձավներում՝ սնունդ հայթայթելով եւ իրենց

րական աշխարհի Առբերան գավառին (գավառի ու քաղաքի մասին առավել մանրամասն տե՛ս Թ. Խ. ՀԱՎՈՐՅԱՆ, ՍՏ. Տ. ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ, Հ. Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 1-ին, Երեւան, 1986, էջ 659, 675–676, ծնթ.՝ քրգմ.):

²¹ Տե՛ս J. BRYCE & A. TOYNBEE, The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915–1916: Documents Presented to Viscount Grey of Falloden by Viscount Bryce, edited and with an introduction by A. Sarafian, Uncensored Edition, Princeton, New Jersey: Gomidas Institute, 2000, էջ 194:

²² Տե՛ս A. OHANDJANIAN, Österreich-Armenien 1872–1936: Faksimilesammlung diplomatischer Aktenstücke, Wien: Ohandjanian, 1995: Հատկապես տե՛ս 1918 թ. սեպտեմբերի 10-ից մինչեւ դեկտեմբեր ընկած ժամանակահատվածին վերաբերող փաստաթղթերը:

կյանքը վերականգնելու համար գրեթե այլ հնարավորություն չունենալով: Ոմանք հիշում են այն սակավաթիվ իրերը, որոնք իրենց նախնիները կարողացել էին փրկել. մի դեպքում դա սել (հաց թխելու համար նախատեսված հարմարանք) էր, իսկ մյուս պարագայում՝ ֆելիմ (կարպետ):

Փրկվածները, որոնց ընտանիքները քայքայվել էին, հազվադեպ էին տեղեկանում ընտանիքի մյուս անդամների ճակատագրի մասին. որոշ փրկվածներից տարիներ է պահանջվել՝ պարզելու համար՝ հարազատներին հաջողվե՞լ է որեւէ ապաստան գտնել, թե՞ ոչ: Թուրքիայում մնացած բարեկամների ճակատագրի վերաբերյալ սույն անտեղյակությունն իրենց կյանքի ողջ ընթացքում մտատանջել²³ է ոմանց, եւ նույնիսկ ազդել հաջորդ սերնդի կյանքի վրա, քանի որ վերջիններս եզդիների անդրազգային²⁴ համայնքներում դեռ շարունակում են որոնել [իրենց] ընտանիքի անդամների ժառանգներին: [Մեծ ողբերգություն] վերապրածներն ստիպված էին դիմակայել [թշնամուն] նաեւ Բաշ-Ապարանի պատերազմի²⁵ ընթացքում, երբ օսմանյան զորքերը ներխուժել ու գրավել էին հայկական տարածքների մի մասը: Հարցման վաթսուներեք մասնակիցներից բոլորը, բացի մեկից, քաջատեղյակ էին իրենց նախնիների գոյատեւման պատմությանը: Զրուցակիցներից երկուսը հստակորեն բացատրեցին, որ իրենց ծնողներին տեղահանել են համընդհանուր պատերազմի պատճառով: Նրանցից ոմանք նաեւ գիտեին, որ իրենց ընտանիքները փորձել են վերադառնալ, սակայն վերապրել են [ցեղասպանական] հալածանքների երկրորդ փուլը: Շատերը հիշեցին իրենց ծնողների հայրենի գյուղերի անունները, ինչպես նաեւ իրենց ունեցած հոտերի եւ ունեցվածքի չափը: Նրանք նշել են ոճրագործների ցեղային պատկանելությունն ու հիշատակել, թե [պետական] որ կառույցն են վերջիններս ներկայացրել, ինչպես նաեւ մտաբերել են նրանց, ովքեր իրենց օգնել են փախուստի ընթացքում: Սույն պատմությունները թույլ են տվել մեզ վերականգնել

²³ Սույն հատվածում հեղինակը կիրառել է անգլերեն «occupy» բառը, որը տվյալ շարակարգում կարելի է թարգմանել միայն «զբաղեցնել» իմաստով, սակայն, հաշվի առնելով հայերենի լեզվամտածողության առանձնահատկությունները, ինչպես նաեւ հեղինակի շեշտադրումներն առավել ընկալելի դարձնելու նպատակով այն փոխարինել ենք «մտատանջել» բառով (ծնթ.՝ թրգմ.):

²⁴ Սույն եզրույթի առնչությամբ տե՛ս «Էջմիածին», 2023, Դ., էջ 74, 26-րդ ծնթ. (ծնթ.՝ թրգմ.):

²⁵ Հեղինակն այստեղ եւ հետագա շարադրանքում 1918 թ. հայ-թուրքական պատերազմն անվանում է «Բաշ-Ապարանի պատերազմ»՝ նույնանուն ճակատամարտի անունով (ծնթ.՝ թրգմ.):

հալածանքների կազմակերպված բնույթն ընդգծող տարատեսակ պատկերները²⁶։ Մարդիկ բացատրում էին, որ մեղսագործները ոչ միայն օսմանյան զինվորներն ու թուրքական կամ քրդական հրոսակախմբերն էին, այլև հարեւան բնակավայրերի հասարակ բնակիչները, որոնք հարձակվում էին գյուղերի վրա՝ [տեղահանված մարդկանց] գույքն ու անասնահոտերը յուրացնելու նպատակով։ Այն փաստը, որ [ցեղասպանական] հետապնդումները ծրագրավորված ու կազմակերպված բնույթ են կրել, գրեթե միշտ ակնհայտ է. դա հստակ երեւում է զինվորների կամ կիսառազմականացված ստորաբաժանումների՝ գյուղացիներին նախապես զինաթափ անելու, զանգվածային գնդակահարություններով կազմակերպած սպանդի, գյուղական բնակավայրերը հրկիզելու, անվտանգություն կեղծ զգացումի միջոցով գյուղացիների զգոնությունը թուլացնելու, թակարդներ լարելու, մարդկանց հավաքելու եւ նրանց լեռնակիրճերը նետելու կամ փախստականների՝ սահմանագոտում գտնվող գետն անցնելու փորձերի ընթացքում նրանց վրա կրակ բացելու տեսարաններից։ Այստեղից էլ ակնհայտ երեւում է նրանց մտադրությունը՝ կենդանի չթողնել որեւէ մարդու։

Մոտ ութսունամյա մի տղամարդ, որն ապրում է հայ-եզդիական խառն ազգաբնակչություն ունեցող մի գյուղում²⁷, վերհիշեց իր հոր պատմությունը։ Հայրը մոտ տասը տարեկան էր, երբ [ոճրագործները] հարձակվեցին նրա հայրենի գյուղի վրա։ Հորն ու պապուն հաջողվեւ էր ձիերով փախչել ճահճուտների միջով, սակայն վերջինիս տատը, քույրը, մայրը, եղբայրն ու հայրը սպանդի զոհ էին դարձել։ Ընտանիքի անդամներից ոմանք սպանվել են, իսկ մյուսները՝ անցել գետը։ Նրա նախապապը՝ ցեղի առաջնորդը, ամբողջությամբ սխալ էր գնահատել ստեղծված իրադրությունը եւ հրաժարվել էր իր տոհմի հետ ապաստան փնտրել։ Ցեղապետը վախեցել է [թուրք] զինվորների հնարավոր հարձակումից, սակայն հալածիչները հասարակ թուրք մարդիկ էին, որոնք հարձակվել ու կոտորել են նրանց։ Հարձակումից մեկ օր առաջ նրանք հավաքել են գյուղացիների զենքերը՝ ձեւացնելով, թե իբր ծրագրում են փորձարկել հրացանները եւ խոստացել հաջորդ օրը հետ վերադարձնել դրանք։ Այդ

²⁶ Բնագրում կիրառված «aspect» բառն ունի «տեսք, կերպարանք, կողմ, հայեցակետ, տեսակետ» եւ այլ իմաստներ, սակայն, հաշվի առնելով հայերենի առանձնահատկությունները, հիշյալ եզրույթը փոխարինել ենք «պատկեր» բառով (ծնթ.՝ թրգմ.)։

²⁷ Հարցազրույց, 2015 թ. հոկտեմբերի 12։

օրը գյուղին են մոտենում կանացի զգեստներ հագած սովորական մարդիկ՝ իբր գոմաղբ հավաքելու, ապա հարձակվում են եզդիների վրա եւ հափշտակում նրանց ունեցվածքն ու անասնահոտերը: Իրենց հայ հարեւանների հետ միասին ցեղասպանվեցին նաեւ եզդիական այդ տոհմի անդամները:

Հետագոտող Թերեզա Ամրյանն արձանագրել է իր նախատատերի կյանքի պատմությունները: Նա պատկերել է [մահմեդականության] սուլնի դավանանքին պատկանող քրդերի ու եզդիների փոխհարաբերությունների բարդությունը, որն առնչվում է իր ընտանիքի առաջնորդի՝ Սիաբենդ անունով անձնավորության վերապրած փորձառություններին. «Քրդերը, որոնք մեր հարեւաններն էին, սկսեցին դանակներ ու հրացաններ գնել բոլորից: Մեր փախուստից մի քանի օր առաջ մի քուրդ տղամարդ, որ իմ մանկության ընկերն էր, եկավ մոտս եւ ասաց, որ զենք է ուզում գնել: Ես մի կոտրված հրացան ունեի եւ այն վաճառեցի նրան: Վերջում կատակով հարցրի նրան՝ ի՞նչ ես անելու հրացանը: Արդյո՞ք որսի ես գնալու: Քուրդ տղամարդն ընդհատեց ինձ՝ ասելով. «Սիաբենդո՛ւ, վաղը ես կգամ եւ այս հրացանով կսպանեմ քեզ ու քո ընտանիքին»²⁸:

Տարաբնույթ ձեւերով նկարագրված է մահմեդական քրդերի մասնակցությունը [ցեղասպանական] հալածանքներին ու կոտորածներին: Մեղադրանքները տատանվում են կրոնական կամ տնտեսական նկատառումներով քրդերի՝ որոշակի դիտավորությամբ մասնակցության եւ նրանց՝ օսմանյան բանակի ձեռքում քաղաքական բնույթի գործիքի վերածված լինելու միջեւ: Այդուհանդերձ, առկա են նաեւ պատմություններ, որոնցում նկարագրվում է, թե ինչպես են սուլնի քուրդ հարեւաններն օգնել եզդիներին փախչել: Պահպանվել են քրդերի՝ նրանց զգուշացնելու բազմաթիվ տարատեսակ օրինակներ, որոնց համաձայն՝ նրանք թաքցրել են երեխաներին, մինչեւ նրանց սահմանային գետ հասնելը պաշտպանել աքսորի ուղին բռնած անձանց, իսկ [եզդիների]՝ ինչ-որ տեղ պատսպարվելու պարագայում չեն բացահայտել նրանց գտնվելու

²⁸ Տե՛ս T. AMRYAN, My Yezidi Great-Grandmothers: They Witnessed Armenian Genocide, "Hay Zinvor: The official newspaper of the Ministry of Defence of Republic of Armenia", № 15, 1084, 2015, էջ 23–29: Հմմտ. Թ. ԱՄՐՅԱՆ, Իմ եզդի նախատատերը. նրանք տեսել էին Հայոց Ցեղասպանությունը, «Հայ Զինվոր», № 15, 1084, 2015 (<http://www.hayzinvor.am/31463.html>, վերջին մուտք՝ 17.07.2023 թ.): Նշենք նաեւ, որ եզդի ընտանիքի ղեկավարի անունն անգլերենում «Սիաբենդ» կամ «Սիաբենդո» է, իսկ հայերեն հղյալ բնագրում՝ «Սիբանդո» (ծնթ. թրգմ.):

վայրը: Իր ընտանիքի պատմությունը վերապատմելիս՝ ութսունամյա մի մարդ նկատեց, որ «նրանք այդ գյուղում չեն ունեցել քուրդ հարեալներ, քրդեր եղել են [շրջակա] մյուս գյուղերում, [բայց] նրանք ճանաչել են միմյանց, քանի որ վերջիններս մեկը մյուսի կիրիվներն»²⁹ [համաձնողություն]³⁰ են եղել: Կար մի [քուրդ] մարդ, որը մոտեցավ հորս եւ հուշեց նրան՝ ասելով. «Փախի՛ր, որովհետեւ նրանք որոշել են սպանել քեզ»: Նա քուրդ էր, նա մեր ընտանիքի կիրիվն [=կնքահայր] էր»³¹:

Եզդիների ու քրդերի միջեւ կապեր ստեղծելու համար, չնայած եզդիականության մեջ առկա խմբային ներտոհմական (Endogamy— ջնծոն+ յάμος) ամուսնության խիստ կանոններին, որոնք թույլ չեն տալիս խառնամուսնություններ, մարդիկ կապված են եղել միմյանց, օրինակ, ցեղային փոխհարաբերությունների միջոցով կամ սանահայրության դրսեւորման ձևերով: Որոշ դեպքերում հարցմանը մասնակցած եզդիները բացատրել են, որ վերոնշյալ հարաբերությունները չեն խոչընդոտել նմանատիպ կապերով [միմյանց հետ] կապված անձանց՝ նրանց հալածանքի ենթարկելու համար:

«Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու եւ պատժելու մասին» համաձայնագրի 2-րդ հոդվածը ցեղասպանությունը սահմանում է հետեւյալ կերպ. «Ցեղասպանություն նշանակում է հետեւյալ գործողություններից ցանկացածը՝ կատարված ազգային, էթնիկական, ցեղային կամ կրոնական որեւէ խմբի, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ»: Սույն ձևակերպումն իր մեջ ներառում է.

ա) այդ խմբի անդամների սպանությունը,

բ) այդ խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր վնաս պատճառելը,

գ) որեւէ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնաւոր ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը,

²⁹ Քրդերենում «kirîv» բառը նշանակում է «կնքահայր, սանահայր, քավոր» (տե՛ս «Քրդերեն—հայերեն, հայերեն—քրդերեն գործնական բառարան», կազմողներ՝ Վ. Լ. ԿԱՏՎԱԼՅԱՆ, Ա. Ա. ԱՔՐԱՀԱՄՅԱՆ եւ Գ. Մ. ՄԽԻԹԱՐՅԱՆ, Երեւան, 2016, էջ 234, 586, ծնր.՝ թրգմ.):

³⁰ Մամեդականության մեջ տղաներին թլփատում են կիրիվի [այսինքն՝ սանահայր] ծնկներին նստած ժամանակ: Սույն ծիսակատարությունը ձևավորում է բարեկամական հարաբերություններ եւ սահմանում երեխայի խնամքի պարտավորություններ:

³¹ Հարցազրույց, 2015 թ. հոկտեմբերի 13:

դ) այդ խմբի միջավայրում մանկածնությունը կանխելուն միտված միջոցների իրականացումը, եւ

ե) երեխաների բռնի փոխանցումը մարդկային մի խմբից մյուսին³²:

Այսօր եզդիների՝ իրենց նախնիների փոխանցած փորձառության հիմամբ ներկայացրած վերապատումների պարագայում ականհայտ է, որ [վերոնշյալ համաձայնագրի] որոշ կետեր իսկապես իրագործվել են:

Հարցման մասնակիցների գրեթե բոլոր վերապատումներում բացահայտորեն նկատելի է [ցեղասպանական] հալածանքների ռազմավարական բնույթը: Փրկվածներից ոմանք որեւէ մեծ ընտանիքին կամ տոհմին պատկանող այն միակ անհատներն էին, որոնց հաջողվել է ողջ մնալ: Բոլոր զրուցակիցները, բացառությամբ երկուսի, պատմեցին, որ նրանք կորցրել են իրենց ընտանիքի անդամներին: Հարցմանը մասնակցած անձանց որոշ նախնիների հաղորդած տեղեկությունների համաձայն՝ նրանց զինաթափել են ցեղասպանական հարձակումներից օրեր առաջ կամ նետել ծուղակների մեջ. այս ամենը ցույց է տալիս, որ հիշյալ իրադարձությունները կանխամտածել են օսմանյան զինված ուժերը: Սույն ուժերը հաճախ օգտագործել եւ իրենց ձեռքում գործիք են դարձրել քրդական ցեղային կիսառազմականացված ստորաբաժանումներին կամ հրոսակախմբերին՝ գնդակահարություններ, կողոպուտ ու կոտորածներ կազմակերպելու համար: Ականատեսների փոխանցած վկայությունները բովանդակում են ոչ միայն իրենց վերապրած հալածանքների նկարագրությունները, այլեւ գնահատականներ կամ բացատրություններ առ այն, թե ինչու տոհմի կամ ընտանիքի մի մասին հաջողվեց կամ չհաջողվեց փրկվել: Նրանք բացատրեցին, որ քաղաքական իրավիճակի վերաբերյալ սխալ դատողությունների կամ մոլորության մեջ հայտնվելու պատճառով որոշ ցեղերի ու ընտանիքների առաջնորդներ ժամանակին չփնտրեցին ապաստարաններ եւ չկարողացան պաշտպանել իրենց ժողովրդի կյանքը:

ԲՆԱՋՆՋՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՈՒԺԱՅԻՆ

ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

[Օսմանյան կայսրության] արեւելյան նահանգների բազմազգ միջավայրի դիտարկման տեսանկյունից դեռեւս առկա է մասնավոր դեպքերի

³² Սույն կոնվենցիայի բոլոր հոդվածները տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75835> (վերջին մուտք՝ 17.07.2023 թ.), ծնք.՝ prqul.:

համապարփակ ու հիմնավոր վերլուծության անհրաժեշտությունը: Սույն տարածաշրջանում ապրած քրիստոնեական մի քանի համայնքներ վաղ թե ուշ ցեղասպանական հալածանքների զոհերը դարձան: Դեռ ավելին՝ առավել փոքր «հերետիկոսական» խմբերը նույնպես հարձակման են ենթարկվել. կասկած չկա, որ քրիստոնյաներն ու եզդիները թիրախային հիմնական խմբերն են եղել: Քուրդ (մահմեդական) ազգաբնակչության պարագայում անհնար է ընդհանուր եզրակացության հանգել հալածանքների ընթացքում նրանց ունեցած դերակատարության վերաբերյալ, քանի որ առկա են բազմաթիվ անորոշ պահեր³³: Քրդական զորամիավորումները, հրոսակախմբերն ու ցեղային ստորաբաժանումները կարեւոր գործոն էին ցեղասպանական բռնությունների գործադրման ընթացքում. նրանք կամ գործիք են դարձել թուրքական ռազմական ուժերի ձեռքին ու ներգրավվել ռազմավարական հարձակումների մեջ, կամ հանդես եկել որպես առանձին ավազակախմբեր, որոնք օգտագործել են խուճապի ընդհանուր իրավիճակը՝ անձնական հարստություն դիզելու նպատակով: Կան նաեւ օրինակներ, երբ մահմեդական քրդերն իրենք են ենթարկվել հալածանքների, տեղահանության, թալանի կամ սպանդի: Ու. Հյունգյո-րը վերլուծել է չափազանց բարդ այս փոխազդեցությունը Դիարբեքիրի նահանգում. «Զանգվածային սպանդին միացել են նաեւ որոշ քուրդ ցեղապետերը, արաբներն ու չերքեզները, մինչդեռ եզդիները, ասորիներն ու քրդերը ենթարկվել են հալածանքների: Փաստորեն, Դիարբեքիրի նահանգում առաջին գյուղերը, որտեղ իրագործվել են զանգվածային կոտորածները, եղել են Դիարբեքիրի դաշտավայրի ասորական գյուղական բնակավայրերը..., քրդական որոշ ենթացեղեր, եւ մի քանի նշանավոր ընտանիքներ վերջնականապես աքսորվել են Անատոլիայի կենտրոնական ու արեւմտյան շրջանները, որտեղ նրանց զգալի մասը մահացել է սննդի պակասից եւ վարակիչ հիվանդություններից»³⁴:

Սույն նահանգներում տարածաշրջանային ուժային տեղաբաշխություններն իրենց մեջ ներառում էին ազգային մեծամասնությունների (կամ քրդեր, կամ հայեր), ազգագրական առումով տարբեր՝ առավել

³³ Առավել մանրամասն տե՛ս “100 Jahre Völkermord an ArmenierInnen und die KurdInnen: Komplexe Vergangenheit und Nachwirken in der Gegenwart”, Heraus. von F. Hennerbichler, Ch. Osztovics, T. Schmidinger und M. Six-Hohenbalken, “Wiener Jahrbuch für Kurdische Studien”, Wien: Caesarpres, 2015:

³⁴ Տե՛ս Ս. Մ. Մ. Մ. ÜNGÖR, The Making of Modern Turkey: Nation and State in Eastern Anatolia, 1913–1950, Oxford: Oxford University Press, 2011, էջ 101:

փոքր համայնքների (քրիստոնեական հարանվանություններ եւ, այսպես կոչված, հերետիկոսական խմբեր), ինչպես նաեւ՝ ժողովրդագրական առումով բազմազան՝ դեռ ավելի փոքր ցեղային խմբերի (օրինակ՝ սուլունի դավանանքին պատկանող մահմեդական գաղթականներ, որոնք նախորդ տասնամյակներին բնակություն էին հաստատել Անատոլիայում. օրինակ՝ չերքեզներ) միջեւ առկա բարդ փոխհարաբերություններ։ Բոլոր նահանգներում, տարածաշրջանային ուժային տեղաբաշխությունների եւ բազմազգության դրսեւորման պայմաններում, եզդիները, բացառությամբ Լալեշի ու Սինջարի³⁵ գավառների, ազգագրագիտության առումով փոքրամասնության կարգավիճակում էին։ Կայսրության մեջ եւ տարբեր գավառներում ազգային մեծամասնությունների միջեւ առկա փոխհարաբերությունները, ինչպես նաեւ բախումներն ու [թուրքական իշխանությունների հանդեպ] դրսեւորած հավատարմությունն իրենց ազդեցությունն ունեցան նաեւ ազգային փոքրամասնությունների վրա։

Ազգային-կրոնական այս բարդ ուժային միավորումները ոչ միայն առճակատվում էին պետական իշխանություններին, այլեւ [Օսմանյան] կայսրությունն ու նրա իշխանավորները նմանաբնույթ փոխազդեցությունն օգտագործում էին պետական քաղաքականության իրագործման համար։ Արեւմտյան Հայաստանի նահանգներում եւ այն գավառներում, որտեղ հայ ազգաբնակչությունը մեծամասնություն էր, եզդիներն ավելի խոցելի էին թվում, քան այն շրջաններում, որտեղ մեծամասնությունը քրդական սուլունի բնակչությունն էր։ Ընդհանուր առմամբ, ցեղասպանական հալածանքներն ուղղված են եղել ոչ միայն հայերի, այլեւ ազգագրական առումով առավել փոքր քրիստոնեական խմբերի՝ ուղղափառ ասորիների, նեստորականների, քաղդեացիների եւ հույների դեմ³⁶։ Կան պատմական փաստեր, որոնք ցույց են տալիս, որ եզդիները միանգամայն դրական հարաբերություններ են ունեցել հարեւանությամբ ապրած քրիստոնեական խմբերի ներկայացուցիչների հետ³⁷։ Հայաստանաբնակ եզդիների հետ հարցազրույցի ընթացքում վերջիններս ընդգծեցին նրանց [այսինքն՝ քրիստոնյաների] հետ համընդհանուր ճակատագիր

³⁵ Սուլեյի առնչությամբ առավել մանրամասն տե՛ս «Էջմիածին», 2023, Դ., էջ 72, 21-րդ ծնթ. (ծնթ.՝ քրդ.)։

³⁶ Տե՛ս “Late Ottoman Genocides: The Dissolution of the Ottoman Empire and Young Turkish Population and Extinction Policies”, ed. by D. J. Schaller & J. Zimmerer, London and New-York, Oxon: Routledge, 2010։

³⁷ Տե՛ս J. S. GUEST, The Yezidis: A Study in Survival, London & New York: KPI, 1987։

ունենալու հանգամանքը եւ հիշեցին, որ իրենց նախնիները նրանց հետ միաժամանակ են աքսորվել ու միասին ապաստան փնտրել: Երբ ցեղապանական հալածանքների հարվածի տակ ընկավ Արեւմտյան Հայաստանի ոչ մահմեդական ազգաբնակչությունը, փոքրամասնություն հանդիսացող եզդիները, որոնք ընկալվում էին իբրեւ «այլադավան հերետիկոսության» պատկանող մի համայնք, նույնպես տուժեցին պետական մակարդակով կազմակերպված բնաջնջման ռազմավարություններից:

Այն շրջաններում եւ նահանգներում, որտեղ բնակչության մեծամասնությունը մահմեդական քրդերն էին, տարածաշրջանային ուժային կառույցներն առանձնանում էին կրոնական, լեզվական եւ ցեղային պատկանելության վրա խարսխված հավատարմությանմբ: Օսմանյան կայսրության մեջ քրդերի մեծամասնությունը, որպես սուննի մահմեդականներ, պատկանում էին ումմային՝ մահմեդական համընդհանուր համայնքին³⁸: Ցեղային պատկանելությունն ու համապատասխան էթնոազգային նկրտումները կազմավորման ընթացքի մեջ էին: Կարելի է պնդել, որ ավանդական ցեղային համակարգը, որի շրջանակում նվիրապետական քրդական ցեղերը ձեւավորել էին տեղական իշխանությունը, որն առավել կամ պակաս չափով միահյուսված էր պետական համակարգին կամ հանդիսանում էր դրա բաղկացուցիչ մասը եւ պայմանավորված էր [Օսմանյան] կայսրության քաղաքական ձգտումներով, կարող էր ազդեցություն ունենալ եզդի ազգաբնակչության վիճակի վրա: Եղել են նաեւ դեպքեր, երբ կազմավորվել են եզդի-մահմեդական/քրդական խառնացեղեր, ինչպիսին միլլին³⁹ է, սակայն եզդիական ցեղերը, ընդհանուր առ-

³⁸ Սկսած 622 թվականից՝ յասրիբցիները («Յասրիբ»-ը Սաուդյան Արաբիայի Մադինա քաղաքի նախախլամական շրջանի անվանումն է) ընդունում են մահմեդականներին: Վերջիններս հայտնի են դառնում որպես «ներգաղթյալներ» (արաբ.՝ *المهاجرين* — մուհաջիրունա), իսկ յասրիբցիները՝ «զինակիցներ» (արաբ.՝ *الأنصار* — անսար): Այդպես ձեւավորվում է մահմեդականության առաջին կրոնական համայնքը՝ ումման, որի ղեկավարն է դառնում Մուհամմադը: Ումման մարմնավորում է բոլոր մուսուլմանների եղբայրության եւ միասնության գաղափարը՝ անկախ ազգային, ռասայական եւ սոցիալական պատկանելությունից: Մահմեդական միասնության տեսանկյունից համայնքը դիտարկվում է իբրեւ մեկ իսլամական ազգ: Դուրանում հանդիպում է 60 անգամ (սուլին մասին առավել մանրամասն տե՛ս E. A. Резван, Умма, «Ислам: Энциклопедический Словарь», отв. ред. С. М. Прозоров, Москва: Наука, 1991, էջ 241—242, F. Mathewson Danny, The Meaning of Ummah in the QUR'AN, “History of Religions”, 1975, vol. 15, № 1, էջ 34—70 եւ այլն, ծնթ.՝ քրգմ.):

³⁹ Լրացուցիչ դեպքերի առնչությամբ առավել մանրամասն տե՛ս M. SYKES, The Kurdish Tribes of the Ottoman Empire, “The Journal of the Royal Anthropological Institute of Great Britain and Ireland”, vol. 38, 1908, էջ 451—486, <https://doi.org/10.2307/2843309>:

մամբ, ավելի շատ կախված էին քրդական (սուննի) ցեղային հասարակությունից, թեև արտաքինապես նրանք երբեք չեն հանդիսացել դրա միջուկի բաղկացուցիչ մասը: Մարտին վան Բուինեսսենը քրդական ցեղային կառուցվածքներին⁴⁰ նվիրված իր դասական աշխատության մեջ եւ Ու. Լյուսմիտ Լյունգյորը⁴¹, որն ուսումնասիրել է Ի. դարի առաջին կեսին Թուրքիայում ազգային ու պետական կառույցների զարգացման հարցը, դիտարկել են ծայրահեղ այն փոփոխությունները, որոնք տվյալ ժամանակահատվածում տեղի են ունեցել իշխանության տեղական համակարգերում: Եվ եզդիները, եւ մահմեդական քրդերը կազմակերպված էին՝ համաձայն ցեղային միավորների, սակայն այլադավան հպատակներ ունեին միայն քուրդ մահմեդական ցեղերը: Ու. Լյունգյորը դիտարկել է Տուր Աբդինում քրդական ցեղային երկու՝ Դեքժուրի⁴² ու Հեվերկանի⁴³ իշխանությունների միջև գոյություն ունեցած մրցակցության հարցը՝ ընդգծելով, որ «ցեղային շահերն ու հավատարմությունը գերակա են եղել կրոնական շահերի ու հավատարմության նկատմամբ»⁴⁴:

Ձնայած այն բանին, որ եզդիները հպատակության վիճակում էին այն նահանգներում, որտեղ գերակշռել են մահմեդական քրդերը, այդուհանդերձ, թվում է, նրանք ավելի պաշտպանված էին հենց այդ պատճառով: Ի տարբերություն այն տարածքների, որտեղ գերակշռում էին հայերը, սուլյն շրջաններում ապրող բնակչության (քուրդ սուննի) մեծամասնությունը չէր թիրախավորվել ցեղասպանական հալածանքների ընթացքում: Այսօր Դիարբեքիրից հարավ՝ Մոսուլի ուղղությամբ սփռված նահանգների պես քրդաշատ այս տարածքներում, ի սկզբանե բնակչություն հաստատած եզ-

⁴⁰ Sêu M. VAN BRUINEN, Agha, Shaikh and State: The Social and Political Structures of Kurdistan, London: Zed Books, 1992:

⁴¹ Առավել մանրամասն տե՛ս Ս. Ս. ԸՆԳՐ, The Making of Modern Turkey: Nation and State in Eastern Anatolia, 1913—1950, Oxford: Oxford University Press, 2011:

⁴² Քրդական ցեղերից կազմված սուլյն համադաշնությունը հայտնի է եղել նաև «Դաքժուրի» կամ «Դեքժուրի» անուններով (առավել մանրամասն տե՛ս Ս. Ս. ՕԼՖԵՐԵՅԵՎ, В верховьях Тигра: дневник и описание пути, составленные надворным советником Олферьевым во время поездки в земли несториан осенью 1912 г., Москва, 2017, էջ 264, ծնթ.՝ թրգմ.):

⁴³ Հեվերկանի ցեղային միությունը կազմված է եղել քրդական մոտ 24 ցեղերից եւ գոյություն է ունեցել Բոհթանի էմիրության կազմում: Սուլյն համադաշնությունը կազմավորվել է 1919 թ.՝ վերջինիս առաջնորդի սպանության արդյունքում: Նշենք նաև, որ Դեքժուրի եւ Հեվերկանի ծագումնաբանական համադաշնությունների կազմում ընդգրկված են եղել ոչ միայն եզդիները, այլ նաև հայերը, ասորիներն ու ազգային մյուս փոքրամասնությունները, որոնք բնակվել են հիշյալ տարածաշրջանում (ծնթ.՝ թրգմ.):

⁴⁴ Տե՛ս Ս. Ս. ԸՆԳՐ, նշ. աշխ., 2011, էջ 13, ծնթ.՝ 18-րդ:

դիների ժառանգների հիշողության մեջ գրեթե չի պահպանվել բնաջնջման դեպքերին վերաբերող որեւիցե պատմություն: Եւ ընդհակառակը՝ այն ժամանակ (ներկայիս) հյուսիսային Սիրիայում բնակություն հաստատած կամ ապաստան գտած եւ հիմնականում քրիստոնեաբնակ Տուր Աբդինից սերող գաղթական եզդիների սերունդները քաջատեղյակ են իրենց նախնիների ճակատագրի ու փախուստի մասին⁴⁵:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրության արեւելյան սահմանամերձ տարածքներում ստեղծված ընդհանուր իրավիճակը դժվար է հասկանալ: Կայսրության վարած քաղաքականության, Ռուսաստանի, Հայաստանի ու Իրանի՝ հարեւանությանը տեղակայված ուժերի, ինչպես նաեւ Արեւմտյան կայսրությունների (Կենտրոնական տերությունները եւ [վերջիններիս] դաշնակիցները) արտաքին ազդեցությունների արդյունքում տարածաշրջանային մակարդակով ձեւավորվել էին ուժային՝ խիստ հակասական հարաբերություններ: Համաձայն Դ. Գանթի, Ն. Աթթոյի եւ Ս. Օ. Բարթոմայի բնորոշման՝ դրանք [այնպիսի] «տարածքներ էին, որտեղ ազգային ու կրոնական զանգվածային բռնությունների հանդեպ առկա էր հակվածություն... [դրանք] «բեկված գոտիներ» էին, որոնք առաջանում էին սահմանային տարածայնությունների հետեւանքով»⁴⁶:

Սույն տարածաշրջանում հասարակական-քաղաքական ու տնտեսական խիստ անկայուն իրավիճակի առկայության պայմաններում [ազգային] փոքրամասնությունները հայտնվել էին ծայրահեղ վտանգավոր վիճակում: Որոշ հետազոտողներ սույն գործընթացների առնչությամբ նկատում են ավելի երկարատեւ բնույթի պատմական հիմքեր՝ ընդգծելով, որ այդ անկայունության [արտաքին] նշաններն արդեն ակնհայտ էին դարձել ԺԹ. դարի կեսերին: Այսպես, օրինակ, թեւեւ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ասորախոս ժողովուրդների դեմ կիրառված հալածանքների մասին քիչ բան է հայտնի, Դ. Գանթն ու մյուսները հայտարարեցին, որ ասորիների ու քրդերի միջեւ մահա-

⁴⁵ Սույն տեղեկությունը քաղված է Գերմանիայում բնակվող եզդիների հետ կազմակերպված հարցումներից եւ զրույցներից:

⁴⁶ See D. GAUNT, N. ATTO & S. O. BARTHOMA, Introduction: Contextualising the Sayfo in the First World War, in: "Let Them Not Return. Sayfo-The Genocide Against the Assyrian, Syrian, and Chaldean Christians in the Ottoman Empire", ed. by D. Gaunt, N. Atto & S. O. Barthoma, New York & Oxford: Berghahn, 2017, էջ 1–32, իսկ Օ. Բարթոմայից եւ է. Դ. Վալթցից կատարված մեջբերումը տես էջ 12 շրնկ.:

բեր հակամարտություններն արդեն սկսվել էին դեռևս ԺԹ. դարակեսերին, երբ քրդական վերջին էմիրությունների փլուզման եւ էթնոազգային շարժումների սկզբնավորման պատճառով ուժային հարաբերությունները գտնվում էին փոխակերպման ընթացքի մեջ: Եզդիների հալածանքներում քուրդ սուլնի մահմեդականների ունեցած դերակատարությունն ունի հակասական բնույթ: Հարցման մասնակիցներից ոմանք պատմեցին, որ իրենց ծնողներին հետապնդել են քրդական անկանոն ստորաբաժանումները կամ իրարանցման պահերին՝ նրանց քուրդ հարեւանները: Մյուսները վերհիշեցին, որ իրենց նախնիներին փրկել են քրդերը, որոնք կամ օգնել են նրանց փախչել, կամ փախուստի ճանապարհին չեն հարձակվել նրանց վրա: Պատմություններն արտացոլում էին շատ տարբերվող մի տեսակետ՝ հազվագեպ արտահայտելով քրդերի դերակատարության վերաբերյալ ընդհանրացումներն ու հիշատակելով այն հանգամանքը, որ եղել են նաեւ արդար քրդեր⁴⁷:

Այսօր եզդիները վերհիշում են լուսանցքայնացմամբ⁴⁸ եւ արտաքսմամբ ընդգծված եզդի — (սուլնի) քրդական փոխհարաբերությունները:

⁴⁷ Օսմանյան կայսրությունում հալածանքների ու բնաջնջման հրամաններին ընդդիմացած նահանգային պետական ներկայացուցիչների, ինչպես նաեւ զորահրամանատարների ունեցած դերակատարության պարզաբանման առնչությամբ առավել մանրամասն տե՛ս R. DONEF, Righteous Muslims during the Genocide of 1915, Sydney, 2010, էջ 1—12 <http://www.atour.com/library/authors/pdf/DrRachoDonef-RighteousMuslimsDuringTheGenocideOf1915.pdf> (վերջին մուտք՝ 07.08.2023 թ.):

⁴⁸ Բնագրի սուլն հատվածում հեղինակը կիրառել է «marginalization» հասարակագիտական եզրույթը, որը հայերեն թարգմանվում է «լուսանցքայնացում» (տե՛ս Ս. ՄԱՐԻԱՆ, Սոցիոլոգիա. անգլերեն—հայերեն բացատրական բառարան, Երեւան, 2015, էջ 120, ծնթ.՝ քրգմ.): Սուլն հասկացությունը հայտնվել է ամերիկյան ընկերաբանությունում (սոցիոլոգիա) 1920-ական թթ.՝ ներգաղթյալների նոր հասարակական պայմաններին չհարմարվելու իրավիճակը նշելու համար: Ավելի հստակ. մարգինալացումը (լատ. marginalis) կամ լուսանցքայնացումը կարելի է բնութագրել որպես քաղաքացիական հասարակության կազմաբանման գործընթաց, որն արտահայտվում է հասարակական խմբերի քայքայմամբ, մարդկանց միջեւ ավանդական կապերի խզմամբ, գեղագիտական, բարոյագիտական, իրավական, բնախոսական, հասարակական, հոգեւոր եւ համամարդկային այլ կարգերի ու արժեքների խեղաթյուրմամբ, որոնք իշխանությունների, ամբոխավարների եւ արկածախնդիրների անկանխատեսելի եւ անվերահսկելի գործողությունների հետեւանք են: Այսինքն՝ մարդկանց լուսանցային խումբը մի խումբ է, որը մերժում է մշակույթի որոշակի արժեքներ ու ավանդույթներ կրող մեկ այլ խմբի եւ պնդում իր սեփական սովորույթների ու արժեքների համակարգը (առավել մանրամասն տե՛ս R. PEACE, Social exclusion: A concept in need of definition?, “Social Policy Journal of New Zealand”, 2001, էջ 17—36, ինչպես նաեւ՝ I. M. YOUNG, Fünf Formen der Unterdrückung, in: “Philosophie der Gerechtigkeit: Texte von der Antike bis zur Gegenwart”, Heraus. von Ch. Horn und N. Scarano, Frankfurt am Main: Suhrkamp Verlag, 2002, էջ 428—445 եւ այլն, ծնթ.՝ քրգմ.):

Հաստատակամ սուննի հավատացյալները եզդիներին համարում էին անհավատներ եւ վերաբերվում նրանց որպես վտարանդիների: Նույնիսկ այսօր եզդիները հիշում են իրենց այն փորձառությունը, որ ձեռք էին բերել ուղղափառ մահմեդականների սառը եւ ժխտողական դիրքորոշման հետեւանքով. վերջիններիս աշխարհընկալման համաձայն՝ եզդիները համարվում էին «անմաքուր»: Սա նշանակում էր, որ քրդաբնակ տարածքներում հաճախ ընդգծվում էին ոչ թե հասարակական կյանքում առկա նմանությունները (միեւնույն լեզու, ընդհանուր հողատարածք), այլ տարբերությունները: Այնուամենայնիվ, տարածաշրջանային քաղաքականության մեջ պայմանավորված՝ եղել են նաեւ դեպքեր, երբ եզդիները քրդերի հետ միասին դասակարգվել են որպես մեկ ընդհանուր ցեղային խումբ: Ցեղային համակարգերը, համադաշնությունների քաղաքականությունները եւ եզդիական ու քրդական ցեղերի համագործակցությունը, թվում է, հակազդել են կրոնական առումով հիմնավորված ժխտողականությանը:

Շարունակությունը՝ հաջորդիվ

Անգլերենից թարգմանությունը՝
ՅՈՒԱԿ ՍԱՐԿԱՎԱԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

